Հավելված N 35
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի 2020 թվականի մարտի 4-ի ՈԳՔՀ/65-2020 հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի (այսուհետ՝ Մարզպետարան) տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության (այսուհետ՝ Վարչություն) հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ, ծածկագիրը՝ 93-1.5-Մ2-3

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի գլխավոր մասնագետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս գլխավոր մասնագետը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Բաժնի պետը:

1.4. **Աշխատավայրը**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. Իրականացնում է ներքին գործերի և ազգային անվտանգության, պաշտպանության, կապի, էներգետիկայի, հարկային, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ու այլ ոլորտներում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության աշխատանքները.
2. Իրականացնում է հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և Մարզպետարանի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ ու համաձայնեցված գործունեության կազմակերպումը.

3. Իրականացնում է մարզի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից սահմանված կարգով տեղեկատվության ստացումը.
4. Իրականացնում է անհրաժեշտ աջակցություն՝ խաղաղ ժամանակ զինվորական կոմիսարիատներին զորահավաքային աշխատանքների իրականացման գործում.
5. Իր իրավասության շրջանակներում անհրաժեշտ աջակցություն է իրականացնում սահմանապահ զորքերին՝ պետական սահմանի պահպանության գործում.
6. Զինված ուժերի զորահավաքային պատրաստության և զորակոչի իրականացման, զինծառայողների պահեստ արձակված անձանց, նրանց ընտանիքների անդամների սոցիալական, իրավական պաշտպանվածության ուղղությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների իրականացման նպատակով կատարում է համապատասխան աշխատանքները.
7. Պաշտպանության նպատակով իրականացնում է տարածքի և հաղորդակցության ուղիների նախապատրաստման միջոցառումների, զորահավաքային ծրագրերի ու խնդիրների կատարումը.
8. Մասնակցում է տարածքային պաշտպանական միջոցառումների ծրագրավորմանը և օժանդակում դրանց իրագործմանը.
9. Իրականացնում է Մարզպետի, Մարզպետի տեղակալների և Գլխավոր քարտուղարի մոտ հրավիրվող խորհրդակցություններին, մարզխորհրդի նիստերին, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարների և հրավիրվող անձանց մասնակցության ապահովման և հաշվառման աշխատանքները.
10. Մասնակցում է մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպմանը.
11. Մասնակցում է հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնոլոգիական աղետների վերացման աշխատանքներին.
12. Մարզի տարածքում հարկային մարմինների գործունեության, կապի և էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման և գազամատակարարման խնդիրների առնչությամբ կազմակերպում է հանրապետական գործադիր մարմինների համապատասխան տարածքային ծառայությունների ղեկավարների հետ Մարզպետի կողմից անցկացվող խորհրդակցություններ.

13. Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին.
14. Նախապատրաստում է տեղեկություններ համապատասխան հանրապետական գործադիր մարմնի կողմից տվյալ բնագավառում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման վերաբերյալ.
15. Քննարկում է քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման և այլ մարմինների գրությունները, լուծելով դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով.
16. Այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր.

Իրավունքները՝

1) Մարզի տարածքում զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցությունների նախապատրաստման նպատակով, համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ կազմակերպել նախնական քննարկումներ, ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր: Խորհրդակցությունների օրակարգային հարցերի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.
2) Մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների իրականացման լիարժեք և արդյունավետ կազմակերպման նպատակով, ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
3) Մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները լիարժեք և արդյունավետ իրականացնելու նպատակով ներկայացնել համապատասխան առաջարկություններ.
4) Տեղական ինքնակառավարման մարմիններից, զինվորական կոմիսարիատներից, ուսումնական հաստատություններից և այլ կազմակերպություններից ստանալ զորակոչիկներին տարկետման տրամադրմանն առնչվող տեղեկություններ, նյութեր, փաստաթղթեր: Մարզային զորակոչային հանձնաժողովի օրակարգրային հարցերի վեաբերյալ ներկայացնել առաջարկություններ.
5) Տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտի Հայաստանի

Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացման աշխատանքների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր: Մարզում տեղակայված զինվորական ստորաբաժանումների հետ Մարզպետարանի համագործակցությունը լիարժեք և արդյունավետ ապահովելու նպատակով ներկայացնել համապատասխան առաջարկություններ.

6) Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին՝ տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման, դրանց հետևանքների վերացման, մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.

   Մարզի տարածքում ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի և այլ զանգվածային միջոցառումների անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին.

Պարտականությունները՝

1) Ներկայացնել մարզի տարածքում զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման խնդիրների առնչությամբ պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվող խորհրդակցությունների օրակարգերի նախագծեր, ստացված տեղեկությունների ուսումնասիրությունների և խորհրդակցությունների կազմակերպման հարցերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություններ, ապահովել անցկացվող խորհրդակցությունների և աշխատանքային քննարկումների արձանագրումը.
2) Ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություններ ոստիկանության և ազգային անվտանգության ոլորտի պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումներից ստացված և Մարզպետի կողմից հաստատվող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ:
3) Ուսումնասիրել և ներկայացնել եզրակացություններ արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի պետական կառավարման մարմնի տարածքային ստորաբաժանումից ստացված և Մարզպետի կողմից հաստատվող իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ:
4) Իրականացնել մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության և հակահամաճարակային միջոցառումների աշխատանքները: Ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր:
5) Իրականացնել արտակարգ իրավիճակների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների

վերացման, օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացման, տեղական ինքնակառավարման մարմիններին ու բնակչությանը քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին ներգրավման աշխատանքները: Ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.

6) Մասնակցել պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացի, ինչպես նաև զորահավաքային նախապատրաստության շրջանակներում անցկացվող ուսումնավարժական հավաքների ու պարապմունքների աշխատանքներին: Ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.

7) Մասնակցել Մարզպետի հանձնարարականներով, համապատասխան պլաններով ու ծրագրերով նախատեսված՝ տարածքային կառավարման մակարդակում պաշտպանության ոլորտի Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացման աշխատանքներին: Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ մարզում տեղակայված զինվորական ստորաբաժանումների հետ մշտապես օպերատիվ կապ ապահովելու ուղղությամբ: Ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցագրեր, տեղեկություններ և այլ փաստաթղթեր.

8) Իրականացնել Մարզպետին հասցեագրված, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և Մարզպետարան վերահասցեագրված գրությունների, դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքները.

9) Մասնակցել Մարզպետարանի, ինչպես նաև համապատասխան մարմինների տարբեր ստորաբաժանումների հետ կազմակերպված՝ առաջադրված խնդիրների լուծման շուրջ աշխատանքային և մասնագիտական քննարկումներին.

10) Իրականացնել Բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակման աշխատանքները.

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տարածքային կառավարման կամ տեղական

ինքնակառավարման բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաները

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաները

1. Բողոքների բավարարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման կամ դիմումների քննարկման արդյունքում որոշումների նախապատրաստման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: